ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

2018թ.ապրիլի 23
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագիր՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Տրանշ 4
Առաջադրանքի անվանում՝ Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի համար մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում և Հեղինակային հսկողության իրականացում, ինչպես նաև Թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7 կմ ճանապարհի և 6 կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում (Տրանշ 4)
Պայմանագիր թիվ՝ T4-CS-01

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր)՝ Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Եվրասիական զարգացման բանկից (ԵԱԶԲ) որպես Ծրագրի ֆինանսավորում, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստման և Հեղինակային հսկողության իրականացման, ինչպես նաև թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7 կմ ճանապարհի և 6 կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստման (Տրանշ 4) պայմանագրի համար:
2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է (այսուհետ՝ ՀՀՃՄՆԾ), որի նպատակն է՝ 556 կմ ընդհանուր երկարությամբ Մեղրի-Երևան-Բավրա ավտոճանապարհի միջոցով երկրի հարավը կապել հյուսիսի հետ՝ կրճատելով այդ ճանապարհը 85 կմ-ով և հասցնելով մինչև 470կմ:
3. Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայությունները) ներառում են.
- Քաջարան-Ագարակ (Իրանի սահման) 45 կմ ճանապարհահատվածի կառուցման մանրամասն նախագծի պատրաստում, Տրանշ 4 (Լոտ 1 և Լոտ 2),
- 32կմ ճանապարհահատվածի մրցութային փաստաթղթերի տեխնիկական մասի պատրաստում (Լոտ 1),
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախագծային լուծումների ճշգրտության և համապատասխանության հեղինակային հսկողություն:

Հաղթող Խորհրդատուի հետ կկնքվի 2 պայմանագիր, մասնավորապես՝
Մանրամասն նախագծի պատրաստման Պայմանագիր (Միանվագ գումարով պայմանագիր).
Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի համար մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում, Թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7կմ ճանապարհի և 6կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում (Տրանշ 4), (15 ամիս),
Հեղինակային հսկողության պայմանագիր (Ժամանակի վրա հիմնված պայմանագիր).
Ագարակից մինչև թունելի ելքը մոտ 32 կմ ճանապարհի հեղինակային հսկողության իրականացում:
Ծրագրի ներքո կնքվող պայմանագրերը կհամաֆինանսավորվեն Եվրասիական զարգացման բանկի Կայունացման և Զարգացման Եվրասիական Հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Գնումների ամբողջ գործընթացը կղեկավարվի Համաշխարհային բանկի կողմից սահմանված կանոնակարգերին և գործընթացներին համապատասխան:

4. Պատվիրատուն, ի դեմս ծրագիրն իրականացնող «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը, որը գործում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության անունից (ՏԿՏՏՆ), որպես Տրանշ 4-ի իրականացնող մարմին, սույնով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներին) արտահայտելու իրենց հետաքրքվածությունը հետևյալ ծառայությունների մատուցման համար՝ Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստում և Հեղինակային հսկողության իրականացում, ինչպես նաև թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7 կմ ճանապարհի և 6 կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապարտաստում (Տրանշ 4): Բոլոր խորհրդատվական կազմակերպությունները՝ ներառյալ

համատեղ ձեռնարկությունները, պետք է օրենքով սահմանված կարգով գրանցված լինեն ՀՀՀ-ի ներկայացման վերջին ամսաթվից առնվազն տասը (10) տարվա ընթացքում:
Խորհրդատվական կազմակերպությունները՝ ներառյալ համատեղ ձեռնարկությունները, հետաքրքրության հայտերի դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- Խորհրդատվական կազմակերպության գրանցման վկայականը,
- Կազմակերպության գործունեության նկարագիրը:
Խորհրդատվական կազմակերպությունները պետք է ներկայացնեն նախկինում նմանատիպ առաջադրանքներ/պայմանագրեր իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն՝ համառոտ նկարագրելով յուրաքանչյուր առաջադրանքն/պայմանագիր, ֆինանսավորման աղբյուրը (աղբյուրները), պայմանագրի արժեքը և պատվիրատուի մասին տեղեկատվություն: Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են՝
a) Ընդհանուր փորձառություն – Խորհրդատուի մասնակցությունը ճանապարհների շինարարության/ հիմնանորոգման ծրագրերում (վերջին 10 տարվա ընթացքում Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ճանապարհաշինարարական ծրագրերում մասնակցություն),
b) Ծրագրի հետ առնչվող փորձառություն- ճանապարհների և թունելների կառուցման/ վերանորոգման մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրերի պատրաստում և Հեղինակային հսկողության իրականացում (վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրերի քանակը),
c) Կազմակերպության անձնակազմի և կարողությունների ընդհանուր գնահատում (առկա մշտական աշխատակազմ, ընթացիկ ծրագրերի նկարագիր):
5. Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ուշադրություն դարձնեն Խորհրդատուի ընտրության Ուղեցույցի 1.9 կետին, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
6. Որակավորումները հզորացնելու նպատակով Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ՝ համատեղ ձեռնարկության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Մասնակից կազմակերպությունների, թե մայր, թե դուստր, փորձառության և որակավորման այլ կառուցվածքային մասը չի դիտարկվի գնահատման համար: Դա նշանակում է, որ ենթակապալի պայմանագրով գործող խորհրդատվական կազմակերպության որակավորումը և փորձառությունը չի գնահատվի կարճ ցուցակում ընդգրկվելու համար:
7. Խորհրդատվական կազմակերպությունների կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն կամ ռուսերեն լեզվով:

Խորհրդատուն կընտրվի համաձայն Խորհրդատուների ընտրության ուղեցույցով սահմանված Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության (QCBS) ընթացակարգի (Գլուխ 2, Ուղեցույցեր «ՎԶՄԲ վարկի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում Համաշխարհային Բանկի Վարկառուների կողմից հունվար 2011թ, վերանայված հուլիս 2014թ):
8. Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, ժամը 10:00-ից -17:00:
Հայտերը պետք է ներկայացվեն երկու տպագիր օրինակով ստորև նշված հասցեով կամ էլ. փոստի միջոցով Adobe PDF ձևաչափով **մինչև 2018թ. մայիսի 14-ը ժամը՝ 18:00** (տեղական ժամանակով): Եթե փաստաթղթերը ներկայացվում են առձեռն, ապա պետք է ներկայացնել փակ ծրարով և վերնագրել «Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի համար մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում և Հեղինակային հսկողության իրականացում, ինչպես նաև Թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7 կմ ճանապարհի և 6 կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում (Տրանշ 4) Խորհրդատվական ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավեր»:

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն»ՊՈԱԿ
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծ 4, 7-րդ հարկ
Հեռ/Ֆաքս: (374-12) 20 10 10
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Կարապետյան
Էլ.հասցե: vardan.karapetyan@tpio.am ; hasmik.ordukhanyan@tpio.am